ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԳՐԱՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԴԱ ԲԻԼԲՈՒԼՅԱՆԻ 2025-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ (ՄԱՅԻՍ-ՀՈՒՆՎԱՐ) ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի կատարումն 2025 թվականի մայիսի 14-ին կնքված N-7 աշխատանքային պայմանագրի (փորձագետ ընդգրկելու վերաբերյալ) 1.3 կետի ներկայացնում եմ իմ կողմից ութամսյա (ութ ամսվա) ժամկետում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ վարչապետի կողմից 2025 թվականի հունիսի 27-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 564-Ա որոշումը,

- մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կառավարության կողմից 2025 թվականի օգոստոսի 28-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1236-Ն որոշումը,

- մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կառավարության կողմից 2025 թվականի սեպտեմբերի 25-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1375-Ն որոշումը, որով համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական)

օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշման մեջ,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշման մեջ,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի «Պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման կարգը և պայմանները սահմանելու մասին» N 595-Ն որոշման մեջ,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության ու պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության և հանրակացարանային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին նվեր ընդունելու լիազորություններ վերապահելու մասին» N 2037-Ն որոշման մեջ:

- մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 22-ի ընդունվել է ««Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-343-Ն, ««Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-344-Ն, ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-346-Ն, ««Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-345-Ն «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-348-Ն, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-349-Ն և ««Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-347-Ն օրենքները:

- Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշման

հավելվածի 106-րդ և 107-րդ կետերի պահանջները՝ մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել ««Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը, որն ընդունվել է 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N 1171-Ա որոշմամբ:

- ՀՀ կառավարության 30.01.2025թ-ի N 4 նիստի արձանագրության 28-րդ կետի համաձայն՝ ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հարապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1666-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը:

Մշակել և Կոմիտեի նախագահի կողմից հաստատվել են՝

- 2025 թվականի հունիսի 23-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N 582-Ա հրամանում լրացում կատարելու մասին» N 296-Ա հրամանը,

- 2025 թվականի օգոստոսի 4-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N 582-Ա հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 376-Ա հրամանը,

- 2025 թվականի սեպտեմբերի 12-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N 582-Ա հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 440-Ա հրամանը,

- 2025 թվականի սեպտեմբերի 12-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 11-ի N 367-Ա հրամանում լրացում կատարելու մասին» N 441-Ա հրամանը,

- 2025 թվականի հոկտեմբերի 23-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 397-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 512-Ա հրամանը,

- 2025 թվականի հոկտեմբերի 28-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N 582-Ա հրամանում լրացում կատարելու մասին» N 533-Ա հրամանը,

- 2025 թվականի նոյեմբերի 3-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի մի շարք հրամաններում փոփոխություններ կատարելու մասին» N 540-Ա հրամանը, որով համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել՝

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2018 թվականի օգոստոսի 21-ի «Ներքին աուդիտի կոմիտե ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2012 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 103-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 84-Ա հրամանում,

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի «Էլեկտրոնային համակարգի միջոցով պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման նպատակով համակարգը սպասարկողներին, համակարգից օգտվողներին և նրանց գործառույթները սահմանելու ու պատասխանատու անձանց անհատական կազմը հաստատելու մասին» N 582-Ա հրամանում,

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերները ժամանակավոր պահպանության վերցնելու կամ ժամանակավոր պահատվության հանձնելու, ինչպես նաև նվերների հանձնման-ընդունման և շուտ փչացող նվերների ոչնչացման գործընթացների իրականացման համար հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 399-Ա հրամանում,

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների ներքին գործավարության կարգը սահմանելու մասին» N 581-Ա հրամանում,

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 20-ի «Պետական գույքի կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության անունից պետական գույքի կառավարման կոմիտեի և պայմանագրի կողմ հանդիսացող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերի միասնական հաշվառման մատյանի վարման, փաստաթղթերի փաթեթների պահպանության և փաստաթղթերի փաթեթներն արխիվի հանձնման, ինչպես նաև պայմանագրով նախատեսված պարտավորությունների հսկողության կարգը հաստատելու մասին» N 11-Ա հրամանում:

- 2025 թվականի նոյեմբերի 5-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 30-ի N 240-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 546-Ա հրամանը,

- 2025 թվականի դեկտեմբերի 26-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N 399-Ա հրամանում լրացում կատարելու մասին» N 634-Ա հրամանը:

Մասնակցել եմ պետական գույքի կառավարման ոլորտը կանոնակարգող, ինչպես նաև լիազորող նորմերի հստակեցման անհրաժեշտություն ունեցող ենթաօրենսդրական իրավական ակտերի ամբողջությամբ գույքագրման աշխատանքներին:

ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու վերաբերյալ համաձայնություն տալու և պայմանագրերի կնքման կարգը հաստատելու մասին» N 1130-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) համաձայն՝ Էլեկտրոնային հաղորդակցության օպերատորի կողմից Պետական գույքի կառավարման կոմիտե ներկայացված՝ պետական շենքերի տանիքին կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման համաձայնություն ստանալու ու հետագայում պայմանագիր կնքելու վերաբերյալ դիմումների հիման վրա, որոշմամբ սահմանված կարգի պահանջներին համապատասխան, կատարել եմ նախապատրաստական աշխատանքներ:

Պետական կառավարման մարմինների կողմից մշակված ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացրել եմ առաջարկություններ:

Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ Կոմիտեի նախագահի, Կոմիտեի նախագահի տեղակալների և Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության պետի կողմից տրված բոլոր գրավոր և բանավոր հանձնարարականները:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԳՐԱՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԴԱ ԲԻԼԲՈՒԼՅԱՆ